



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ
ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու անվան հրապարակ 7, 0201
հեռ. /0232/ 3-10-26, ashtarakmunicipality@gmail.com



24 ՄԱՅԻՍԻ 2018թ.

ԹԻՎ 880

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ
2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ**

Սիրելի՛ շրջանավարտներ,

Այսօր ձեր կյանքի ամենահիշարժան և հաճելի օրերից մեկն է:

«Վերջին զանգն» իր մեջ հրաշալի մի խորհուրդ է ամփոփում: Այն դպրոցական անհոգ մանկության ավարտի և տարատեսակ փորձություններով լի մեծ կյանք մտնելու խորհրդանիշն է:

Վստահ եմ, որ նպատակների իրականացման ճանապարհին հանդիպած ցանկացած խոչընդոտ հաղթահարելու եք ձեր խոհեմությամբ, աշխատասիրությամբ և համբերատարությամբ:

Ցանկանում եմ, որ ձեր հետագա վաստակը ծառայեցնեք ոչ միայն ձեր ընտանիքներին, այլև մեր պետությանն ու հասարակությանը: Հիշե՛ք, որ հենց դուք եք մեր երկրի ապագան և ձեզնից է կախված մեր հայրենիքի հզորությունն ու բարօրությունը:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ ձեզ, ինչպես նաև ձեր ուսուցիչներին ու ծնողներին, որոնց խորհուրդները, հոգատարությունը և, իհարկե, սերը միշտ եղել ու լինելու են ձեր կողքին:

Մաղթում եմ ձեզ նորանոր հաջողություններ, երջանկություն և ամենայն բարիք:

Ձեր՝



Թովմաս Շահվերդյան